

Արևելյան գործընկերության
տարածքային
համագործակցության ծրագիր

Հայաստան-Վրաստան համատեղ
գործառնական ծրագիր

Հաստատվել է Համատեղ որոշումների ընդունման հանձնաժողովի

2014թ-ի հունիսի 20-ի նիստում



Բովանդակություն

1. Ներածություն	Error! Bookmark not defined.
2. Սահմանամերձ շրջանների ռազմավարական վերլուծություն	3
2.1 Ծրագրի մեջ ներառման ենթակա շրջաններ.....	3
2.2 Հայ-վրացական հարաբերությունների առկա վիճակի նկարագրություն.....	3
2.3 Սահմանամերձ շրջանների նկարագրություն	4
2.4 Ուժեղ կողմերի, թույլ կողմերի, հնարավորությունների, սպառնալիքների (SWOT) վերլուծություն.....	7
3. Տարածքային համագործակցության ծրագրի ռազմավարությունը	8
4. Գործառնական նպատակները, գերակայությունները և գործողությունները	9
4.1 Գործառնական նպատակ 1 - Տեղական համայնքների կենսապայմանների բարելավում.....	9
4.2 Գործառնական նպատակ 2 - Ընդհանուր մարտահրավերների հաղթահարում	10
4.3 Գործառնական նպատակ 3 - Մշակույթ, կրթություն և սպորտ	11
5. Կատարողականի ցուցիչները	12
6. Ծրագրի կառավարում	12
6.1 Համատեղ որոշումների ընդունման հանձնաժողով.....	12
6.2 Իրականացնող մարմին	Error! Bookmark not defined.
7. Ծրագրի իրականացում	Error! Bookmark not defined.
7.1 Իրականացման ենթակա ծրագրերը	Error! Bookmark not defined.
7.2 Ծրագրի հնարավոր շահառուները.....	Error! Bookmark not defined.
7.3 Ընտրության, պայամանագրեր կնքելու և ծրագրերի իրականացման ընթացակարգերը.....	16
7.4 Թույլատրելի ծախսեր և տրամադրվող աջակցություն.....	18
8. Ֆինանսական հատկացումներ.....	Error! Bookmark not defined.

Հավելվածներ

Հավելված 1: Ծրագրի մեջ ներառման ենթակա շրջանների քարտեզը.....	20
Հավելված 2: Տարածաշրջանային վիճակագրական տվյալներ.....	21
Հավելված 3: Ծրագրի մշտադիտարկման ցուցիչները.....	22
Հավելված 4: Ծրագրի կառավարում	25
Հավելված 5: Շահագրգիռ կողմերի խորհրդակցությունների արդյունքները	26

1. Ներածություն

Հայաստան-Վրաստան տարածքային համագործակցության ծրագիրը մշակվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և Վրաստանի տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարությունների համատեղ ջանքերով՝ Արևելյան գործընկերության (ԱԳ) տարածքային համագործակցության աջակցության ծրագրի տրամադրած խորհրդատվության արդյունքում:

Տարածքային համագործակցության ծրագրի նկատմամբ երկու մասնակից պետությունների՝ Հայաստանի և Վրաստանի տեղական համայնքների սեփականության զգացումն ապահովելու նպատակով հայ և վրացի գործընկերներն ստեղծել են համատեղ գործառնական ծրագիրը մշակող աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի մեջ ներառված են հետևյալ կառույցների ներկայացուցիչները՝

Հայաստան. Տարածքային կառավարման նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Արտաքին գործերի նախարարություն, Հայաստանի համայնքների ասոցիացիա, ԱԳ քաղաքացիական հասարակության ազգային պլատֆորմ, Շիրակի, Լոռու և Տավուշի մարզպետարաններ;

Վրաստան. Վրաստանի եվրոպական և եվրոատլանտյան ինտեգրման պետական նախարարություն, Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն, Արտաքին գործերի նախարարություն, Հաշտության և քաղաքացիական հավասարության նախարարություն, ԱԳ քաղաքացիական հասարակության ազգային պլատֆորմ:

Աշխատանքային խումբը հանդիպել է 2013թ. հուլիսի 19-ին, Երևանում և 2014թ. մայիսի 16-ին Թբիլիսիում: Համատեղ գործառնական ծրագրի վերաբերյալ խորհրդակցություններ են տեղի ունեցել 2013թ. հոկտեմբերի 11-ին Ստեփանավանում անցկացված Հայաստան-Վրաստան տարածքային համագործակցության տարածաշրջանային համաժողովի ժամանակ: Վերոնշյալ խորհրդակցությունների արդյունքները արտացոլված են այս փաստաթղթի մեջ: Ծրագիրը նախնական հաստատվել է 2014թ. Մայիսի 16-ին:

2014թ. մայիսի 21-ից – հունիսի 5-ը Համատեղ գործառնական ծրագրի վերաբերյալ անց են կացվել հանրային քննարկումներ: Հավելված 5-ում մանրամասն ներկայացված են հանրային լսումների ժամանակ արված դիտողություններն ու առաջարկությունները, ինչպես նաև այն, թե այդ առաջարկություններն ինչ արտահայտություն են գտել համատեղ գործառնական ծրագրի վերջնական տարբերակում: Համատեղ գործառնական ծրագրի վերջնական տարբերակը քննարկվել և ընդունվել է Համատեղ որշումների ընդունման հանձնաժողովի կողմից 2014թ. հունիսի 20-ին Դիլիջանում:

Այս փաստաթղթի մեջ ներառված են Հայաստանի ու Վրաստանի սահմանամերձ շրջանների սոցիալական, տնտեսական և բնապահպանական զարգացման նկարագրությունը՝ ամփոփված SWOT վերլուծության աղյուսակում (կետ 2), տարածքային համագործակցության ռազմավարությունը և գործառնական նպատակները (կետ 3), սահմանված են գերակայություններն ու հնարավոր գործողությունների շրջանակը (կետ 4), ինչպես նաև իրականացման ենթակա ծրագրերի շահառուներն ու ծրագրի իրականացման պայմանները (կետեր 5-7):

Բոլոր հինգ սահմանամերձ շրջանները (տե՛ս կետ 2.1-ը) միջազգային խորհրդատուների տեխնիկական աջակցությամբ մշակել և ընդունել են իրենց բնորոշ հիմնախնդիրներից բխող զարգացման ռազմավարություններ: Այս ռազմավարություններում շրջանները վերլուծել են առկա իրավիճակը և ձևակերպել իրենց զարգացման տեսլականից բխող գերակա նպատակներն ու ենթանպատակները: Իրականացման ենթակա միջոցառումների տեսանկյունից տարածքային զարգացման

ռազմավարությունների նպատակներն իրենց բնույթով շատ ավելի լայն են, քան ԱլԳ տարածքային համագործակցության ծրագրի նպատակները, սակայն, որպես կանոն, տարածքային զարգացման ռազմավարություններում բացակայում է սահմանային բաղադրիչը:

2. Սահմանամերձ շրջանների ռազմավարական վերլուծություն

2.1 Ծրագրի մեջ ներառման ենթակա շրջաններ

Հայաստան-Վրաստան տարածքային համագործակցության ծրագրի մեջ կարող են ներառվել հայ-վրացական սահմանի 225 կմ երկայնքով տեղակայված հետևյալ շրջանները/վարչական միավորները՝

Հայաստան (մարզ)	Վրաստան (միսարե)
<ul style="list-style-type: none"> Լոռի Շիրակ Տավուշ 	<ul style="list-style-type: none"> Քվեմո-Քարթլի Սամցխե-Ջավախեթի

Տարածքային համագործակցության ծրագրում ներառված է 22,076 քառ.կմ տարածք, որից 9135 քառ.կմ-ը՝ Հայաստանում և 12,941 քառ.կմ-ը՝ Վրաստանում: 2012թ-ին այս տարածքում բնակվել է 1424.8 հազար մարդ, 699,3 հազարը՝ Հայաստանում և 725,5 հազարը՝ Վրաստանում:

Շրջան	Մակերես (քառ.կմ)	Երկրի ողջ տարածքի տոկոսը (մոտավոր)	Բնակչություն (2012թ., հազար բնակիչ)	Երկրի ողջ բնակչության տոկոսը (մոտավոր)	Խտություն (բնակչություն/քառ.կմ)
Հայաստան					
Լոռի	3,750	12.6	282.2	8.6	75.3
Շիրակ	2,681	9.0	282.3	8.6	105.3
Տավուշ	2,704	9.1	134.8	4.1	49.9
Վրաստան					
Քվեմո Քարթլի	6,528	9.4	511.3	11.3	78.3
Սամցխե-Ջավախեթի	6,413	9.2	214.2	4.6	33.4

2.2 Հայ-վրացական հարաբերությունների առկա վիճակի նկարագրություն

2001թ.-ի հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև ստորագրված «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին» պայմանագիրը երկու պետությունների հարաբերությունները կարգավորող հիմնական փաստաթուղթն է: Հայ-վրացական համագործակցության ողջ իրավական շրջանակը բաղկացած է մոտ 80 միջազգային պայմանագրերից, համաձայնագրերից, հուշագրերից և զանազան արձանագրություններից, որոնք ներառում են երկկողմ հարաբերությունների լայն շրջանակ: Ոլորտային համաձայնագրերի նպատակն է բարենպաստ պայմաններ ստեղծել ազատ առևտրի, ցամաքային և օդային հաղորդակցության, իրավական աջակցության համար, խուսափել կրկնակի հարկումից, խրախուսել ներդրումները և խթանել առևտրի ու տնտեսության ոլորտում հարաբերությունների զարգացումը:

Երկկողմանի տնտեսական համագործակցությունը մինչ այժմ հիմնականում կենտրոնացած է եղել էներգետիկայի և տրանսպորտի ոլորտների վրա: Երկու պետությունների տնտեսական համագործակցությունն առավել զարգացնելու նպատակով ստեղծվել է միջկառավարական տնտեսական հանձնաժողով, որի համադեկլարներն են Հայաստանի և Վրաստանի վարչապետները:

Երկկողմանի պայմանագրերը սահմանում են նաև երկու պետությունների սահմանի երկայնքով տեղակայված սահմանային անցակետերի դասավորվածությունը: Ներկայում հայ-վրացական սահմանի վրա 6 սահմանային անցակետ կա՝ 5-ն ավտոմոբիլային ուղիների վրա են տեղակայված (Նինոծմինդա-Բավրա; Գուգութի-Գոգարան; Ախկերպի-Պրիվոնլնոե; Մադախլո-Բագրատաշեն; Ախկերպի-Դիլիջան), իսկ 1-ը՝ երկաթուղային (Մադախլո-Այրում): Հայ-վրացական սահմանը ֆիզիկական անձինք և ավտոմոբիլատրամիջոցները կարող են հատել միայն վերոնշյալ անցակետերով: Սահմանակետերի շրջանցումը համարվում է օրինազանցություն, այդ թվում՝ մաքսային կանոնների խախտում:

2.3 Սահմանամերձ շրջանների նկարագրություն

Հինգ սահմանամերձ շրջանները նման աշխարհագրական պայմաններ ունեն, ինչպես նաև անցումային շրջանի ընդհանուր տնտեսական և սոցիալական պատմություն: Նախկինում (մինչև 1990թ.-ը գոյություն ունեցած) առկա տնտեսական կապերը քանդվել են, նախկինում ունեցած ընդհանուր գիտելիքները հնացել, նախկին սոցիալական կապերը և միջանձնային վստահությունը՝ հիմնականում կորսվել: 1990թ.-ից հետո ստեղծված վարչական և ինստիտուցիոնալ կարգավորումները միմյանցից զգալիորեն տարբերվում են:

Աշխարհագրություն և ենթակառուցվածքներ. աշխարհագրական պայմանները՝ մեծամասամբ լեռնային տարածքը, իրենց ազդեցությունն են ունեցել ծրագրի մեջ ներառման ենթակա հինգ շրջանների բնակեցման և բնակչության խտության վրա: Հայաստանը և Վրաստանը միմյանց կապող հիմնական տրանսպորտային միջանցքները (ճանապարհային և երկաթուղային)՝ մայրաքաղաքներ Երևանն ու Թբիլիսին իրար կապող (Լոռի և Տավուշ/Քվեմո Քարթլի), ինչպես նաև Հայաստանից Սև ծով տանող ուղիները (Շիրակ/Սաղխե-Ջավախեթի) հատվում են այդ շրջաններում: Տարեկան 50 000 ուղևոր սպասարկող Գյումրիում տեղակայված Շիրակի միջազգային օդանավակայանը տարածքի միակ միջազգային օդակայանն է: Չնայած ճանապարհները տարբեր ֆիզիկական վիճակում են գտնվում, նման բարենպաստ տեղակայումը հնարավորություն է ստեղծում տրանսպորտային հանգույցների և առևտրի զարգացման համար:

Ժողովրդագրություն և բնակչություն. Ծրագրի մեջ ներառման ենթակա տարածքի բնակչության հիմնական մասը գյուղաբնակ են: Բացառություն են կազմում հայկական կողմում Շիրակի և Լոռու մարզի բնակիչները, որոնց մոտ 60 տոկոսը քաղաքաբնակներ են: Այդ մարզերի վարչական կենտրոնները՝ Գյումրին (մոտ 145,000 բնակիչ) և Վանաձորը (մոտ 104,000 բնակիչ) թիրախ տարածքի ամենամեծ բնակավայրերն են: Ավելին դրանք Հայաստանի համապատասխանաբար երկրորդ և երրորդ ամենամեծ քաղաքներն են: Թիրախ տարածքի վրացական կողմում ամենամեծ քաղաքը Ռուսթավին է (մոտ 90 000 բնակիչ): Այն Վրաստանի՝ մեծությամբ չորրորդ քաղաքն է և օգտվում է մայրաքաղաք Թբիլիսին մոտ գտնվելու առավելությունից:

Ծրագրի մեջ ներառման ենթակա շրջաններից <<ուղեղների արտահոսքի>> իրական ծավալները դժվար է գնահատել, քանի որ պաշտոնական վիճակագրությունը լիովին չի արտահայտում ներքին միգրացիայի ամբողջական պատկերը: Ընդհանուր առմամբ, բոլոր շրջաններում բացարձակ թվերով բնակչության կայուն թիվը և աճը վկայում է այն մասին, որ այդ շրջանները շարունակում են ապրելու համար գրավիչ մնալ՝ հիմնականում ցածր որակավորում ունեցող աշխատողների համար: Փոքր բիզնեսի, զբոսաշրջության և ցանցերի զարգացումը կարող է հանգեցնել տարբեր որակավորումներ ունեցող աշխատողների համամասնության որոշակի փոփոխության:

Թիրախ տարածքում բնակչության էթնիկ կազմը հարաբերականորեն բազմազան է: Հայկական կողմում այն ավելի միատարր է, բոլոր երեք մարզերը հիմնականում բնակեցված են հայերով, ինչպես նաև փոքրաթիվ ռուսներով, հույներով, եզդիներով ու քրդերով: Վրացական կողմում պատկերն այլ է: Երկու

շրջաններում էլ վրացիները կազմում են բնակչության 40 տոկոսը, մինչդեռ Սամցխե-Ջավախեթիում մեծամասնություն են կազմում հայերը (բնակչության ավելի քան 50 տոկոսը), իսկ Քվեմո Քարթլիում՝ ադրբեջանցիները (բնակչության մոտ 45 տոկոսը): Նմանօրինակ բազմազանությունը տարբեր մշակույթների միջև հաղորդակցության և փոխանակման կարիք և հնարավորություն է ստեղծում:

Գյուղատնտեսություն. բոլոր սահմանամերձ տարածքներում գյուղատնտեսությունը կազմում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) հիմնական մասը՝ բացառությամբ Քվեմո Քարթլիի (որտեղ գյուղատնտեսության բաժինը կազմում է շրջանի համախառն ներքին արդյունքի մոտ 1/5-րդը): Գյուղատնտեսական արտադրությունը մասնագիտացված է ըստ տեղանքի կլիմայական և աշխարհագրական պայմանների: Փորձագետներն ու գյուղատնտեսական կազմակերպությունների ներկայացուցիչները նշում են, որ Հայաստանի սահմանամերձ շրջանների գյուղատնտեսական արտադրանքի զգալի մասը վերամշակվում և վաճառվում է տեղական ու միջազգային շուկաներում, մինչդեռ վրացական շրջանների գյուղատնտեսական արտադրանքը հիմնականում վաճառվում է տեղական շուկաներում, կամ որպես հումք մատակարարվում է այլ ուղղություններով: Գյուղատնտեսական արտադրությունը բոլոր շրջաններում հիմնված է փոքր ֆերմերական հողակտորների վրա և հիմնականում հանդիսանում է ընտանեկան բիզնես: Երկու երկրների փորձագետները մատնանշում են ոլորտում առկա ընդհանուր հիմնախնդիրները՝ տնային տնտեսությունների աճեցրած սերմերի ցածր որակը, գյուղատնտեսական մեքենաների պակասը, մատչելի վարկերի անհասանելիությունը, կենդանիների վարակիչ հիվանդությունների տարածումը, հիմնախնդիրներ՝ կապված հեղեղումների ու ռոտզման հետ, լքված հողակտորներ և այլն: Այս հիմնահարցերին անդրադարձ է կատարված տարածքային զարգացման ռազմավարություններում, քանզի համատեղ լուծումներին աջակցություն ցուցաբերելու դեպքում հնարավոր է օգտագործել ոլորտում առկա չիրացված ներուժը:

Արդյունաբերություն. Քվեմո Քարթլիի արդյունաբերության բաժինը կազմում է շրջանի համախառն ներքին արդյունքի 41 տոկոսը, մինչդեռ ծրագրի մեջ ներառման ենթակա մյուս շրջաններում արդյունաբերական արտադրությունը կարևոր դեր չի խաղում: Արդյունաբերությունը կենտրոնացած է երկու հիմնական ոլորտների վրա՝ սննդամթերքի վերամշակում և արտադրություն, ինչպես նաև ծանր արդյունաբերություն՝ հանքարդյունաբերություն և օգտակար հանածոների մշակում: Տեղում հավաքվող բերքի վերամշակման շնորհիվ սննդամթերքի արդյունաբերությունը գյուղատնտեսության արժեքային շղթայի մաս է կազմում:

Քվեմո Քարթլիի շրջանում և Լոռու մարզում զարգացած է ծանր արդյունաբերությունը, և հանքահանություն է իրականացվում: Հանքարդյունաբերությունն ու ծանր արդյունաբերությունն աղտոտում են օդն ու ջուրը, որն իր ազդեցությունն է ունենում նաև սահմանից այն կողմ գտնվող շրջանների վրա: Այդ իսկ պատճառով երկու երկրներն էլ կարիք ունեն պայքարելու արդյունաբերական արտադրության առաջացրած աղտոտվածության դեմ (քարտեզագրում և մշտադիտարկում, աղտոտված տարածքների վերականգնում, այլևս չշահագործվող տարածքների ապամոնտաժում):

Ծառայությունների ոլորտ, զբոսաշրջություն. ծրագրի մեջ ներառման ենթակա շրջաններում ծառայությունների ոլորտը բավական թույլ է զարգացած և տնտեսության մեջ էական դերակատարում չունի: Դժվար է հաշվարկել միջսահմանային առևտրի խթանման ներուժը, քանի որ պաշտոնական վիճակագրությունը առևտրի վերաբերյալ տվյալներ է ներկայացնում միայն ողջ երկրի մասշտաբով: Երկու երկրների փորձագետները գյուղատնտեսական արտադրանքի բազմաթիվ օրինակներ են բերում, որոնք տվյալ արտադրանքի մեջ մասնագիտացած լինելու հանգամանքից ելնելով վաճառվում են մյուս երկրին: Ենթադրվում է, որ զգալի է նաև երկու երկրների միջև «մաքոքային առևտրի» ծավալը: Միջսահմանային առևտուրը սահմանի երկայնքով տոնավաճառների կամ շուկայի հատուկ օրերին փոքր ազատ առևտրի գոտիներում կարող է վերակենդանացնել նախկին տնտեսական կապերը և օգնել

զարգացնելու առկա համեմատական առավելությունները: Ուշադրություն պետք է դարձվի երկու պետությունների մաքսային օրենքների և կարգավորումների տարբերություններին, որոնք բխում են նաև տարբեր միջազգային պարտավորություններից:

Երկու պետություններում էլ զբոսաշրջիկների ներհոսքն աճում է. նախնական տվյալներով 2012թ.-ի համեմատ 2013թ.-ին Վրաստան այցելած զբոսաշրջիկների թիվն աճել է 20 տոկոսով, իսկ Հայաստան այցելածներինը՝ 10 տոկոսով: Վրաստանի զբոսաշրջության ազգային գործակալությունը նկատել է մեկ այլ միտում՝ ազգային և միջազգային տուրիստական գործակալություններն ավելի շատ են վաճառում Թբիլիսիից Երևան և հակառակ ուղղությամբ փոխադրում/ճամփորդություն ներառող փաթեթներ՝ սրանով իսկ հնարավորություններ ստեղծելով սահմանամերձ շրջանների համար: Զբոսաշրջիկների, ինչպես նաև զբոսաշրջության համար հարմարեցված կացարանների առումով առաջատարը Սամցխե-Ջավախեթին է: Հայկական կողմում զբոսաշրջությունն ավանդաբար կարևոր դեր է ունեցել Տավուշի մարզում, որի զբոսաշրջության համար հարմարեցված կացարանների թիվը (հյուրանոցային 1353 մահճակալ) համեմատած Լոռու և Շիրակի մարզերի հետ (համապատասխանաբար 256 և 176 հյուրանոցային մահճակալ) վկայում է մարզում զբոսաշրջության զարգացածության մասին: Սամցխե-Ջավախեթիի և Քվեմո Քարթլիի շրջանային ռազմավարություններն արձանագրում են ոլորտում առկա ներուժը՝ միաժամանակ մատնանշելով ծառայությունների ցածր մակարդակը և հյուրանոցների փոքր տարողունակությունն ու անհամապատասխանությունը միջազգային չափանիշներին: Վերոնշյալ մարտահրավերների լուծմանն ուղղված համատեղ ջանքերը կարող են օգնել ակտիվացնելու զբոսաշրջիկների ներհոսքը սահմանամերձ այս շրջաններ՝ զարգացնելով տեղական տնտեսությունը:

Բնապահպանություն, բնական ռեսուրսներ և մշակութային ժառանգություն. սահմանամերձ բոլոր շրջանները հարուստ են հին մշակութային հուշարձաններով և տեսարժան վայրերով: Դրանցից են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված մշակութային, բնապահպանական, տնտեսական և սոցիալական արժեք ներկայացնող կառույցները (Հաղպատի և Սանահինի վանքերը), ինչպես նաև պատմական վայրերն ու թանգարանները (Վարձիա, Պատարա Դմանիսի), հայտնի ազգային պարկերը (Բորժոմի-Խարազաուլի ազգային պարկը Վրաստանում և Դիլիջանի ազգային պարկը Հայաստանում) և անդրսահմանային պահպանվող տարածքները (Արփի լիճն ու Ջավախեթիի ազգային պարկը):

Օդի և ջրի աղտոտվածությունը համահունչ է տարածաշրջանում արդյունաբերության զարգացմանը, օրինակ՝ Քվեմո Քարթլին Վրաստանի ամենախոշոր աղտոտողներից է: Տարածքային զարգացման ռազմավարություններում նշված է, որ բնական և մարդածին ռիսկի գործոնների պատճառով շրջաններում անտառային ծածկույթի վիճակն անբավարար է և սահմանափակ: Սահմանամերձ շրջաններին բնորոշ են նաև վտանգավոր երկրաբանական գործընթացներ՝ երկրաշարժեր, սողանքներ, էրոզիաներ, սելավներ, հողերի աղակալում: Ազդեցություն ունենալու նպատակով, անհրաժեշտ է, որ բնապահպանական հիմնախնդիրները լուծվեն համատեղ ջանքերի գործադրմամբ:

Կենսապայմաններ. սահմանամերձ շրջաններում գործազրկության պաշտոնական ցուցանիշը զգալիորեն ցածր է ազգային միջին ցուցանիշներից, սակայն այստեղ առկա է նաև գյուղատնտեսական աշխատանքներով պայմանավորված թաքնված գործազրկություն: Աշխատանքի հիմնական պահանջարկը կենտրոնացած է ցածր որակավորում պահանջող բնագավառներում, որի արդյունքում շատ քիչ հնարավորություններ են առկա բարձրագույն կրթություն ունեցողների համար: Երկու երկրների տնային տնտեսություններում իրականացված հարցումների համաձայն այս շրջաններում վաստակած եկամուտը մոտ մեկ երրորդով քիչ է մայրաքաղաքի բնակիչների վաստակած եկամուտից, նույնիսկ երբ հաշվի է առնվում նաև գյուղատնտեսությունից ստացված եկամուտը: Մինչ բնակարանային ֆոնդի մատչելիությունն ու վիճակն ընդհանուր առմամբ բավարար են և համապատասխանում են բնակիչների եկամուտների

մակարդակին, կոմունալ և հեռահաղորդակցության ծառայությունները հաճախ չեն համապատասխանում բնակիչների կարիքներին: Համաձայն տարածքային զարգացման ռազմավարությունների՝ աղբահանությունը, կոյուղու համակարգը, գյուղական համայնքներում ինտերնետային կապի մատչելիությունը և հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված կառույցներն այն խնդրահարույց ոլորտներն են, որոնք սահմանամերձ շրջաններում լուծման կարիք ունեն: Երկու երկրների սահմանամերձ շրջաններում հասանելի են առաջնային առողջապահական ծառայությունները և տարրական ու միջնակարգ կրթության ծառայությունները, մինչդեռ մասնագիտացված բժշկական հետազոտությունների, ինչպես նաև բարձագույն կրթություն ստանալու համար անհրաժեշտ է տեղափոխվել մայրաքաղաք: Քանի որ Վրաստանում առողջապահական ծառայությունները հիմնականում մասնավոր են, հնարավոր է նաև միջսահմանային բուժման տարբերակը: Սահմանամերձ շրջաններում կենսապայմանների բարելավմանն առնչվող ընդհանուր հիմնախնդիրների առավել արդյունավետ լուծումներ կարող են մշակվել համատեղ ջանքերով: Որպես օրինակ կարելի է նշել աղբի վերամշակման ավելի մեծ գործարանների հնարավոր ստեղծումը, որի համար պետք է իրականացնել պահանջարկի և կարողությունների վերլուծություն:

Վարչական կառույցներ և տեղական կառավարում. Երկու պետությունների տեղական ինքնակառավարման համակարգերի կառուցվածքն էապես տարբեր է: Հայաստանի տեղական համայնքները Վրաստանի համայնքների համեմատ տարածքով և բնակչության թվով ավելի մեծ են: Հետևաբար Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթիի համայնքները (յուրաքանչյուր շրջան 6 տեղական ինքնակառավարման միավոր ունի) ավելի քիչ են, քան Լոռու (113), Շիրակի (119) և Տավուշի (63) մարզերի համայնքները: Երկու երկրներում էլ վերջին շրջանում ներքին քննարկումներ են սկսվել տարածքային կառավարման բարեփոխումների վերաբերյալ: Սա կարող է իր ազդեցությունն ունենալ ապակենտրոնացման մակարդակի և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական անկախության վրա: Մոցիալ-տնտեսական զարգացում ապահովելու նպատակով Վրաստանը քայլեր է ձեռնարկել կենտրոնական, շրջանային և տեղական մակարդակներում բարելավելու իշխանությունների ռազմավարական պլանավորման կարողությունները (տարածքային զարգացման ռազմավարությունների մշակում; տարածքային զարգացման խորհուրդների ստեղծում և գործառնություն):

2009թ.-ից սկսած սահմանամերձ շրջանների միջհամայնքային համագործակցությունը նոր փուլ է թևակոխել: Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ «ԵվրոԿովկաս» ծրագրի շրջանակներում մի քանի նախաձեռնություններ են իրականացվել՝ միավորելով Վրաստանի և Հայաստանի սահմանամերձ շրջանների համայնքները գյուղատնտեսության, զբոսաշրջության և բնապահպանության ոլորտներում: Ցանցային աշխատանքին հետագա աջակցությունը պետք է բարելավի համագործակցության և փորձի փոխանակման որակը:

2.4 Ուժեղ կողմերի- թույլ կողմերի - հնարավորությունների - սպառնալիքների (SWOT) վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Մայրաքաղաքների հետ կապ ապահովող բարենպաստ աշխարհագրական դիրք/ սոցիալական և տնտեսական կենտրոններին մոտ գտնվելը	Շրջանային տնտեսությունը չափազանց կախված է գյուղատնտեսական ոլորտից
Հարուստ բնական ռեսուրսներ և մշակութային հարուստ ժառանգություն	Շրջանային տնտեսությունը մեծամասամբ հիմնված է ցածր որակավորում ունեցող աշխատուժի վրա
Բնակչության համար դեռևս գրավիչ լինելը	Այլ տնտեսական ոլորտները թերզարգացած են (արդյունաբերություն, ծառայություններ)
	Ենթակառուցվածքների վատ վիճակը (օրինակ՝

<p>Տեղական մունիցիպալիտետների և համայնքների միջև գոյություն ունեցող կապերն ու հարաբերությունները</p>	<p>հնացած ջրամատակարարման համակարգերը) Փոքր և միջին բիզնեսի թերզարգացածությունը Աստիճանաբար քայքայվող բնական ռեսուրսները Մահմանափակ սոցիալական ծառայությունները</p>
<p>Հնարավորություններ</p>	<p>Սպառնալիքներ</p>
<p>Հայաստանի և Վրաստանի միջև բարիդրացիական քաղաքական և տնտեսական հարաբերությունները</p> <p>Մահմանամերձ շրջանների, ինչպես նաև ընդհանուր առմամբ Հայաստանի և Վրաստանի միջև առևտրի ծավալների աճը</p> <p>Տարածաշրջանում (Կովկասում) զբոսաշրջիկների թվի աճը</p> <p>Մահմանամերձ շրջաններում ներդրումներ խթանող նոր տարածքային զարգացման ծրագրերը</p> <p>Ազգային, տարածաշրջանային և համաշխարհային շուկաներում էկոլոգիայես մաքուր արտադրանքի պահանջարկի հնարավոր աճը</p> <p>Հաղորդակցության և փոխանակման համար հնարավորություն ստեղծող բազմամշակութային միջավայրը</p> <p>Սպասվող տարածքային և մունիցիպալ բարեփոխումները, որոնք կարող են հանգեցնել ավելի լավ տեղական կառավարման</p>	<p>Մահմանամերձ շրջաններից դեպի մայրաքաղաքներ աճող արտագաղթը, որը հանգեցնում է <<ուղեղների արտահոսքի>></p> <p>Մաքսային միությանը Հայաստանի հնարավոր անդամակցության արդյունքում առևտուրը կանոնակարգող քաղաքականությունների տարբերությունը</p> <p>Մահմանամերձ շրջաններին վնաս հասցնող բնական կամ մարդածին աղետները</p>

3. Տարածքային համագործակցության ծրագրի ռազմավարությունը

Տարածքային համագործակցության հիմնական նպատակն է ամրապնդել միջսահմանային կապերը տեղական իշխանությունների, համայնքների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև՝ օգնելով մշակելու համատեղ լուծումներ վերոնշյալ շրջաններում սոցիալական և տնտեսական զարգացման ընդհանուր մարտահրավերները հաղթահարելու համար:

Ծրագրի թիրախ տարածքում տնտեսական, սոցիալական և բնապահպանական զարգացումների վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ շրջանների միջև տարածքային համագործակցությունը կարող է օգնել հասնելու երեք հիմնական նպատակների, որոնց հասնել հնարավոր չէ միայն ազգային տարածքային զարգացման միջոցառումներով:

Առաջին նպատակն է նվազեցնել միմյանց վրա ուղղակի բացասական ազդեցությունների տարածումը: Մի երկրի սահմանամերձ շրջանում իրականացվող գործողությունները կարող են բեռ դառնալ կամ նույնիսկ վնասել մյուս երկրի սահմանամերձ շրջաններին: Նմանօրինակ ռիսկերը կարող են կանխվել կամ նվազեցվել միայն երկու երկրների համատեղ գործողությունների միջոցով: Սա հիմնականում վերաբերում է գետերի, օդի և ստորգետնյա ջրերի աղտոտվածության արտաքին ազդեցություններին, ինչպես նաև աղբահեռացման, անտառազրկման, որսորդության, անասունների արածեցման և այլ համեմատելի երևույթներին:

Ներկայում Հայաստանի և Վրաստանի միջև նմանօրինակ համագործակցությունը սահմանափակ է, և գոյություն չունի լավ մշակված հաղորդակցության հարթակ: Այդ իսկ պատճառով, տարածքային համագործակցությունը կարող է խթանել նմանօրինակ հարթակների ձևավորումը:

Երկրորդ նպատակն է առավելագույնի հասցնել միմյանց վրա ուղղակի դրական ազդեցությունները: Մի երկրի սահմանամերձ շրջաններում իրականացվող գործողությունները կարող են օգուտ տալ մյուս երկրի սահմանամերձ շրջաններին, եթե երկու երկրները համագործակցեն՝ տեղեկատվություն փոխանակեն շուկաների, տեխնոլոգիաների, գնորդների վերաբերյալ և հեշտացնեն սահմանով ապրանքների և մարդկանց հոսքը: Այս առումով կարելի է անդրադառնալ մի քանի ոլորտների՝

- մի սահմանամերձ շրջանի գիտելիքները և/կամ կարողությունները կարող են հասանելի դառնալ այն շրջանների համար, որոնք կոնկրետ ոլորտում զարգացած չեն (օրինակ՝ աղբի վերամշակման բնագավառում);
- սահմանամերձ շրջաններում կարող են ավելի արդյունավետ կապեր ստեղծվել արտադրողների և սպառողների միջև (օրինակ՝ գյուղատնտեսության և սննդի արտադրության բնագավառներում);
- համագործակցության միջոցով կարող են զարգանալ երկու երկրներում ոչ այնքան զարգացած կարողությունները (օրինակ՝ մշակութային վայրերի պահպանման և զբոսաշրջության բնագավառներում):

Ներկայումս վերոնշյալ ոլորտներում մի քանի համայնքներ համագործակցում են: Տարածքային համագործակցությունը կարող է հաղթահարել շրջանների միջև առկա անջրպետը և օգնել համագործակցության շրջանակի մեջ ներառելու տարաբնույթ ծրագրեր:

Երրորդ նպատակն է բացահայտել միջսահմանային սոցիալական կապիտալի ներուժը: Տեսական միջանձնային կապերը վստահություն են ստեղծում և մեծացնում են տեղեկատվության փոխանակումից ստացված օգուտները: Սահմանի երկու կողմում կրթության, մշակույթի և սպորտի բնագավառներում մարդկանց փոխհարաբերությունների ամրապնդմանն ուղղված միջոցառումներին աջակցելը կստեղծի սոցիալական կապիտալ՝ նվազեցնելով հաղորդակցության արգելքները և կարող է նպաստել հետագայում տարատեսակ միջսահմանային միջոցառումների իրականացմանը:

4. Գործառնական նպատակները, գերակայությունները և գործողությունները

Տարածքային համագործակցության ծրագիրը երեք հիմնական նպատակ ունի՝

- I. Սահմանամերձ շրջաններում տեղական համայնքների կենսապայմանների բարելավում՝ տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացման միջոցով:
- II. Սահմանամերձ շրջաններում առկա բնապահպանական, զբաղվածության, հանրային առողջապահության և ցանկացած այլ ընդհանուր մարտահրավերների հաղթահարում:
- III. Մշակույթ, կրթություն և սպորտ:

4.1 Գործառնական նպատակ 1 - Տեղական համայնքների կենսապայմանների բարելավում

Այս գործառնական նպատակի շրջանակներում աջակցություն կտրամադրվի երկու գերակայությունների իրականացմանն ուղղված միջոցառումներին:

- Թիրախ շրջաններում գյուղատնտեսության զարգացում և դրան առնչվող տնտեսական ոլորտների տարածաշրջանային մրցունակության բարձրացում:

Ինչպես նկարագրված է կետ 2-ում, գյուղատնտեսությունը ծրագրի թիրախ շրջանների տնտեսական և սոցիալական կյանքի առանցքն է կազմում: Միանման բնակլիմայական պայմաններից ելնելով՝ Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ շրջանները գյուղատնտեսական գործունեության տեսանկյունից կարելի է դիտարկել որպես մեկ շրջան: Համատեղ ծրագրերի շրջանակներում կարող են իրականացվել հետևյալ գործողությունները (ցանկն ամբողջական չէ՝)

- գյուղատնտեսական արտադրողների համար գործարար տեղեկատվության ծառայությունների մշակում և գործարկում՝ մատչելի դարձնելու շուկաների վերաբերյալ տեղեկատվությունը;
 - տեղական արտադրանքի տոնավաճառների (սեզոնային) և շուկաների պարբերական կազմակերպում՝ նպաստելու միջսահմանային առևտրին;
 - ցանցերի և առևտրային կապերի հաստատման խրախուսում՝ նպաստելու բարձրարժեք արտադրանքի համատեղ մշակմանը;
 - անասունների արածեցման և ձմեռայինից ամառային արոտավայրեր անասունների միջսահմանային տեղաշարժի համատեղ կառավարում;
 - սահմանամերձ շրջանների ֆերմերներին աջակցելու նպատակով անասնաբուժական և ֆիտոսանիտարական համատեղ ծառայությունների և կենդանիների հիվանդացության ու բույսերի առողջության վերահսկողության համատեղ միջոցառումների մշակում;
 - գյուղատնտեսության և հարակից բնագավառների դրական փորձի փոխանակում և նորարարական տեխնոլոգիաների վերաբերյալ վերապատրաստումների կազմակերպում;
 - ուսումնասիրություններ, հետազոտություններ և գործողությունների մշակում, ինչպես նաև շահերի պաշտպանության քարոզարշավների կազմակերպում՝ ուղղված գյուղատնտեսության բնագավառում կառուցվածքային բարեփոխումների իրականացմանը:
- Թիրախ շրջաններում զբոսաշրջության և հարակից բնագավառների զարգացման հնարավորությունների իրացում:

Ե՛վ Հայաստանում, և՛ Վրաստանում սահմանամերձ շրջանները հայտնի են մշակութային ժառանգության բազմաթիվ կոթողներով և տեսարժան վայրերով: Մի կողմից առկա ռեսուրսները, մյուս կողմից դեպի Հայաստանի և Վրաստանի մայրաքաղաքներ Երևան ու Թբիլիսի զբոսաշրջիկների ներհոսքը հիմք են ստեղծում միջսահմանային զբոսաշրջության զարգացման համար: Եթե այս հնարավորությունները առարկայանան, ապա զբոսաշրջության ոլորտը թիրախ շրջանների տնտեսություններում կարող է էական դերակատարում ունենալ: Համատեղ ծրագրերի շրջանակներում կարող են իրականացվել հետևյալ գործողությունները (ցանկն ամբողջական չէ՝)

- սահմանամերձ շրջանների տուրիստական գործակալությունների, օպերատորների, տեղեկատվական կենտրոնների և հյուրանոցների ցանցերի և ասոցիացիաների ստեղծում;
- համատեղ միջսահմանային զբոսաշրջային ուղիների ստեղծում;
- զբոսաշրջիկներին հետաքրքրող տեսարժան վայրերի վերականգնում՝ վերակենդանացնելու տեղացի և հարևան երկրի զբոսաշրջիկների ներհոսքը;
- մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով տուրիստական ծառայություններ մատուցող տեղական կազմակերպությունների համատեղ վերապատրաստումներ;
- համատեղ սպորտային միջոցառումների և մարզումների կազմակերպման փորձի վերականգնում և նմանօրինակ հնարավորությունների ստեղծում:

4.2 Գործառնական նպատակ 2 - Ընդհանուր մարտահրավերների հաղթահարում

Այս գործառնական նպատակի շրջանակներում աջակցություն կտրամադրվի հետևյալ գերակայության իրականացմանն ուղղված միջոցառումներին՝

- Միջսահմանային բնապահպանական հիմնախնդիրների լուծում

Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ շրջաններն արժեքով եզակի միևնույն բնակլիմայական պայմաններն ունեն։ Սահմանի մի կողմում բնապահպանության ոլորտում կատարված միջամտությունները կարող են ազդեցություն ունենալ մյուս կողմի վրա։ Այդ իսկ պատճառով բնապահպանական հիմնախնդիրների լուծումը համատեղ ջանքեր է պահանջում։ Միաժամանակ, բնապահպանական հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները կարող են լրացնել զբոսաշրջության զարգացման գերակայության իրականացմանն ուղղված այլ միջոցառումներին՝ նպաստելով տեղական զարգացմանը։ Համատեղ ծրագրերի շրջանակներում կարող են իրականացվել հետևյալ գործողությունները (ցանկն ամբողջական չէ)

- ջրային ռեսուրսների՝ ներառյալ հայ-վրացական սահմանով անցնող Դեբեդ գետի համատեղ մշտադիտարկում և կառավարում;
- օդի, ջրի, հողի և ստորգետնյա ջրերի աղտոտվածության վրա միջսահմանային ազդեցություն ունեցող, լուրջ բնապահպանական վնաս պատճառող արդյունաբերական գոտիների համատեղ մշտադիտարկում;
- անտառազրկումը կանխելու և կենսաբազմազանությունը պահպանելու նպատակով անտառների, հատուկ նշանակության հողերի՝ ներառյալ սահմանամերձ շրջաններում հատուկ պահպանվող տարածքների համատեղ մշտադիտարկում և կառավարում;
- համատեղ մոտեցումներ աղբահանության, աղբի կառավարման և վերամշակման հարցերում;
- միջսահմանային բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում:

4.3 Գործառնական նպատակ 3 – Մշակույթ, կրթություն և սպորտ

Այս գործառնական նպատակի շրջանակներում աջակցություն կտրամադրվի երկու գերակայությունների իրականացմանն ուղղված միջոցառումներին։

- Միջսահմանային բազմամշակութային երկխոսության հաստատում և երիտասարդների փոխանակում

Տարածքային համագործակցության ծրագիրը հարուստ բազմամշակութային միջավայրում է իրականացվում, ինչը կնպաստի սոցիալական կապիտալ ստեղծելու նպատակով մարդկանց շփմանը։ Երիտասարդական կազմակերպությունների վրա շեշտադրումը կարող է հիմք հանդիսանալ հետագա միջսահմանային համագործակցության համար։ Համատեղ ծրագրերի շրջանակներում կարող են իրականացվել հետևյալ գործողությունները (ցանկն ամբողջական չէ)

- կրթության, մշակույթի և սպորտի ոլորտում երիտասարդական կազմակերպությունների համագործակցություն;
- մշակութային և սպորտային համատեղ միջոցառումների կազմակերպում;
- դպրոցների և այլ կրթական ու մշակութային կազմակերպությունների փոխայցելություններ;
- բազմամշակութային բազմազանության և մշակութային ժառանգության պահպանման խրախուսում:

- Տեղական ինքնակառավարման բարելավում

Հայաստանի և Վրաստանի համայնքների միջսահմանային համագործակցության նախորդ նախաձեռնություններն բացահայտել են տեղական համայնքների փորձի փոխանակման ներուժը։ Հայաստանում և Վրաստանում քննարկվող տեղական ինքնակառավարման ոլորտում սպասվող բարեփոխումները կարող են շահել առկա փորձի փոխանակումից, ինչպես նաև փոխհամագործակցությունից։ Համատեղ ծրագրերի շրջանակներում կարող են իրականացվել հետևյալ գործողությունները (ցանկն ամբողջական չէ)

- քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով տեղական իշխանությունների համագործակցություն;

- որոշումների ընդունման գործընթացներին մասնակցայնությունն ապահովելու նպատակով կարողությունների զարգացում և տեղական իշխանությունների ու քաղաքացիական հասարակության կառույցների համագործակցություն;
- միջսահմանային փորձի փոխանակում՝ բարելավելու տեղական հանրային կառավարման որակը:

5. Կատարողականի ցուցիչները

Տարածքային համագործակցության ծրագրի առաջընթացը պարբերաբար կմշտադիտարկվի՝ չափելու, թե որքանով է այն համապատասխանում և նպաստում Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի 2010-2013թթ. Տարածաշրջանային Արևելք ծրագրի ռազմավարության և 2010-2013թթ. Ինդիկատիվ ծրագրի իրագործմանը: Այդ նպատակով կօգտագործվեն ստորև ներկայացված որակական և քանակական ցուցիչները:

Արդյունք	Չափման ցուցիչ	Նախնական տվյալներ	Թիրախ
Սահմանամերձ շրջանների տեղական իշխանությունների պաշտոնական և ինստիտուցիոնալ կապի մակարդակի աճը	Դիմում-հայտեր ներկայացնելու հայտարարության արդյունքում ստացված դիմումների թիվը	0	45
	Ծրագրերի դիմում-հայտերի մեջ ներառված կազմակերպությունների թիվը	0	122
Համատեղ իրականացված միջսահմանային ծրագրերի թիվը	Դրամաշնորհների տրամադրման ստորագրված պայմանագրերի թիվը	0	18
	Իրականացված ծրագրերի թիվը	0	18
Տեղական համայնքների միջև առավել արդյունավետ միջսահմանային կապերի աճը	Ծրագրերի շրջանակներում իրականացված միջսահմանային միջոցառումների թիվը	առկա չեն	54

Հավելված 3-ում ներկայացված են անմիջական արդյունքների և արդյունքների ցուցիչները: Այս ցուցիչներն օգտագործվելու են նախնական փորձարկման արդյունքում՝ մշտադիտարկելու տարածքային զարգացման վրա տարածքային համագործակցության ծրագրի տնտեսական և սոցիալական ազդեցությունը:

6. Ծրագրի կառավարում

Համատեղ գործառնական ծրագրի կառավարման մեջ ներգրավված են լինելու հետևյալ կառույցները՝

Համատեղ որոշումների ընդունման հանձնաժողովը, որը երկու երկրների՝ տարածքային համագործակցության ծրագրի նկատմամբ սեփականության զգացում ապահովելուն միտված համատեղ կառույց է:

Իրականացնող մարմինը, որը պատասխանատվություն է կրում Եվրոպական հանձնաժողովի առջև ծրագրի ընդհանուր գործառնական և ֆինանսական կառավարման և իրականացման համար:

6.1 Համատեղ որոշումների ընդունման հանձնաժողովը

Համատեղ որոշումների ընդունման հանձնաժողովը (ՀՈԸՀ) ստեղծվել է մասնակից երկրների՝ Հայաստանի և Վրաստանի կողմից՝ ապահովելու ծրագրի նկատմամբ կողմերի սեփականության զգացումը: ՀՈԸՀ-ին անդամակցելու նպատակով յուրաքանչյուր մասնակից պետություն առաջադրել է

կենտրոնական, մարզային և տեղական իշխանության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ըստ զբաղեցրած պաշտոնների:

Հանձնաժողովի կազմի մեջ են մտնում հետևյալ կառույցները՝

Հայաստան	Վրաստան
<p><u>Քվեարկության իրավունք ունեցող անդամներ:</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ 2. Էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչ 3. Արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ 4. Հայաստանի համայնքների ասոցիացիայի ներկայացուցիչ 5. Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ազգային պլատֆորմի ներկայացուցիչ 6. Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ 7. Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչ 8. Տավուշի մարզպետարանի ներկայացուցիչ 	<p><u>Քվեարկության իրավունք ունեցող անդամներ:</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարի առաջին տեղակալ 2. Եվրոպական և եվրոատլանտյան ինտեգրման Վրաստանի պետական նախարարության աշխատակազմի ներկայացուցիչ 3. Արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ 4. Հաշտության և քաղաքացիական հավասարության նախարարության աշխատակազմի ներկայացուցիչ 5. Վրաստանի պետական կանցելարիայի շրջանային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ կապերի բաժնի ներկայացուցիչ 6. Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ազգային պլատֆորմի ներկայացուցիչ 7. Քվեմո Քարթլիի նահանգապետի աշխատակազմի ներկայացուցիչ 8. Սամցխե-Ջավախեթիի նահանգապետի աշխատակազմի ներկայացուցիչ
<p>Դիտորդներ (խորհրդակցական ձայնով՝ առանց քվեարակելու իրավունքի)</p>	
<p>Եվրոպական հանձնաժողով՝ ի դեմս Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն և Վրաստանում Եվրոպական միության պատվիրակություն</p>	
<p>Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀՀ/GIZ)՝ որպես իրականացնող մարմին</p>	
<p>Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության աջակցության ծրագրի աշխատակազմ</p>	

ՀՈՀԸ-ի գործառույթներն են՝

- Այժմ տարածքային համագործակցության աջակցության ծրագրի օժանդակությամբ սահմանել ծրագրի գերակայությունները և հաստատել Համատեղ գործառնական ծրագիրը;
- որոշում կայացնել ըստ գերակայությունների ծրագրի ռեսուրսների օպտիմալ բաշխման վերաբերյալ;
- խորհրդատվություն տրամադրել իրականացնող մարմնին ծրագրերի ընտրության չափորոշիչների և դիմորդների ուղեցույցի վերաբերյալ;
- իրականացնող մարմնի հետ համագործակցությամբ ընտրել տարածքային համագործակցության ծրագրի կողմից ֆինանսավորման ենթակա ծրագրերը, որոնք պետք է հաստատվեն Եվրոպական հանձնաժողովի կողմից;
- մշտադիտարկել սահմանված նպատակներին ծրագրի ընթացքի համապատասխանությունը՝ ծանոթանալով իրականացնող մարմնի կողմից ներկայացված հաշվետվություններին:

ՀՈՐՀ-ում որոշումներն ընդունվում են <<մեկ երկիր = մեկ ձայն>> սկզբունքով: Աշխատանքների իրականացման և որոշումների ընդունման մանրակրկիտ մեթոդաբանությունը կսահմանվեն ՀՈՐՀ-ի կանոնակարգում:

6.2 Իրականացնող մարմին

Իրականացնող մարմինը (ԻՄ) պատասխանատու է տարածքային համագործակցության ծրագրի գործառնական և ֆինանսական կառավարման համար: ԻՄ-ի գործառնականությունն են՝

- մշակել և տարածել դիմում-հայտեր ներկայացնելու հայտարարությունները;
- ընդունել և գրանցել դիմում-հայտերը;
- կազմակերպել ծրագրերի ընտրության գործընթացը;
- ստորագրել դրամաշնորհների տրամադրման պայմանագրերը և կատարել վճարումները;
- վերահսկել ծրագրերի գործառնական և ֆինանսական իրականացումը;
- զեկուցել ԵՀ-ին՝ ծրագրերի ֆինանսական և գործառնական կատարման վերաբերյալ:

ԻՄ-ը դրամաշնորհատուների հետ կարող է պայմանագրեր կնքել միայն ՀՈՐՀ-ի և ԵՀ-ի կողմից ֆինանսավորման ենթակա ծրագրերի վերջնական ցանկի հաստատումից հետո:

Վերոնշյալ գործառնականությունների իրականացման համար Եվրոպական հանձնաժողովը որպես Իրականացնող մարմին է ընտրել Գերմանական միջազգային համագործակցության ընկերությանը: Ի հավելում ծրագրի գործառնական և ֆինանսական կառավարման գործառնականություններին՝ ԻՄ-ը կիրականացնի նաև ՀՈՐՀ-ի քարտուղարության գործառնականությունները:

7. Ծրագրի իրականացում

7.1 Իրականացման ենթակա ծրագրեր

Տարածքային համագործակցության ծրագրի շրջանակներում ֆինանսավորման են ենթակա միայն բնությով իրապես միջսահմանային և մասնակից պետություններից յուրաքանչյուր առնվազն մեկ գործընտրող ներգրավմամբ ծրագրերը: Որպես կանոն, ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումները պետք է բխեն Տարածքային համագործակցության ծրագրի գերակայություններից: Հնարավոր բացառությունները, եթե այդպիսիք լինեն, պետք է մասնավորեցվեն դիմորդների ուղեցույցի մեջ: Ծրագրերի անմիջական արդյունքները պետք է ազդեցություն ունենան սահմանի երկու կողմերի վրա և բխեն ծրագրի գերակայություններից:

Տարածքային համագործակցության ծրագրի կողմից ֆինանսավորվող ծրագրերը պետք է լինեն շահույթ չհետապնդող, ծրագրերը չեն կարող ունենալ շահույթ ստանալու նպատակ, ինչպես նաև դրանց իրականացման արդյունքում չի կարող շահույթ գոյանալ: Առևտրային գործունեությանը աջակցություն չի տրամադրվի:

Ծրագրերի իրականացման նվազագույն տևողությունը կարող է լինել 9 ամիս, իսկ առավելագույնը՝ 18: Շահառուների և ԻՄ-ի միջև դրամաշնորհի տրամադրման պայմանագրերի ստորագրման պահին ծրագրերի առավելագույն տևողությունը պետք է վերանայվի՝ հավաստիանալու, որ ֆինանսավորվող ծրագրերը կավարտվեն մինչև 2016թ.-ի դեկտեմբերի 31-ը:

Տարածքային համագործակցության ծրագիրը կարող է օժանդակել (1) <<փափուկ>> ծրագրերի, օրինակ՝ միտված կառուցվածքային տնտեսական և սոցիալական փոփոխություններին, այլ ոչ կառուցապատման կամ սարքավորումների տրամադրման միջոցառումներին և (2) ենթակառուցվածքների

զարգացման փոքրածավալ ծրագրերի: ՏՀ ծրագիրը պետք է նախընտրություն տա «փափուկ» ծրագրերին, որոնց թիրախ կհանդիսանան ինստիտուտների հզորացումը, վերապատրաստումները, քաղաքականությունների բարեփոխումները, փորձի փոխանակումը կամ նմանօրինակ այլ միջոցառումներ, և այն ծրագրերին, որոնք հավասարակշռություն կպահեն «փափուկ» բաղադրիչի և ֆիզիկական ենթակառուցվածքների զարգացման միջև:

7.2 Ծրագրի հնարավոր շահառուները

Հանրային մարմինները, պետական կազմակերպությունները¹, մարզային և տեղական իշխանությունները, հանրային շահին միտված ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունները կարող են դառնալ Տարածքային համագործակցության ծրագրի շահառուներ: Ծրագրի կողմից աջակցություն կարող են ստանալ մասնավորապես հետևյալ շահառուները (ինչպես սահմանված է ազգային օրենսդրությամբ)`

Հայաստան	Վրաստան
<p>Հանրային մարմինները`</p> <ul style="list-style-type: none"> • տեղական ինքնակառավարման մարմինները` ավագանիները և համայնքի ղեկավարները` քաղաքային համայնքներում քաղաքապետերը, գյուղական համայնքներում գյուղապետերը (2014թ.-ի փետրվարի 18-ին ըդունված ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին >> օրենք; 2002թ.-ի ապրիլի 7-ի ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենք; ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ 728 հրամանագիր) <p>Պետական կազմակերպությունները`</p> <ul style="list-style-type: none"> • պետական ոչ-առևտրային կազմակերպությունները (2001թ.-ի հոկտեմբերի 23-ի ՀՀ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի հոդված 3(1)) <p>Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները</p> <ul style="list-style-type: none"> • հիմնադրամները (2002թ.-ի դեկտեմբերի 12-ի ՀՀ «Հիմնադրամների մասին» օրենքի հոդված 3) • հասարակական կազմակերպությունները (2001թ.-ի դեկտեմբերի 4-ի ՀՀ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի հոդված 3) <p>• Ցանկացած այլ իրավաբանական անձ, ով համապատասխանում է 2004/18/EC Որոշման</p>	<p>Հանրային մարմինները`</p> <ul style="list-style-type: none"> • տեղական ինքնակառավարման գործակալությունները` սակրեբուլո, գամգոբա, քաղաքապետարան, մունիցիպալետ (<<Հանրային ծառայության մասին>> օրենքի հոդված 4; <<Հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասին>> օրենքի հոդված 4; <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրգանական օրենք) <p>Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները</p> <ul style="list-style-type: none"> • շահույթ չհետապնդող իրավաբանական անձինք (Վրաստանի Քաղաքացիական օրենսգիրք) <p>• Ցանկացած այլ իրավաբանական անձ, ով համապատասխանում է 2004/18/EC Որոշման հանրային մարմինների, պետական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության կառույցների սահմանումներին :</p>

¹ Այս մարմինները պետք է համապատասխանեն հետևյալ չափորոշիչներին` (ա) ստեղծված լինեն հանրային շահ հանդիսացող կարիքների լուծման հատուկ նպատակով` չլինելով արդյունաբերական և առևտրային կառույցներ, (բ) լինեն իրավաբանական անձ, և (գ) հիմնականում ֆինանսավորվեն պետական, մարզային կամ տեղական իշխանությունների կամ հանրային իրավունքով կարգավորվող այլ մարմինների կողմից, կամ այդ մարմինների կողմից կառավարվեն/վերահսկվեն, կամ ունենան կառավարման խորհուրդ, որի անդամների կեսից ավելին նշանակվում են պետական, մարզային կամ տեղական իշխանությունների կամ հանրային իրավունքով կարգավորվող այլ մարմինների կողմից: 31.03.2004թ.-ի 2004/18/EC Որոշում, 30.04.2004թ.-ի L 134/114 պաշտոնական գրանցամատյան:

հանրային մարմինների, պետական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության կառույցների սահմանումներին :	
---	--

Որպես կանոն, այս ծրագրի շրջանակներում ֆինանսական օժանդակություն կարող են ստանալ միայն ծրագրի մեջ ներառման ենթակա շրջանները ներկայացնող կառույցներն ու կազմակերպությունները: Ծրագրի մեջ ներառման ենթակա տարածքից դուրս գտնվող համանման կառույցների հնարավոր մասնակցությունը կմանրամասնվի դիմորդների ուղեցույցում:

Այս դասակարգման շրջանակներից դուրս գտնվող իրավաբանական անձինք կարող են որպես գործընկերներ իրենց մասնակցությունն ունենալ ծրագրերում: Վերջիններս պետք է իրենց գործողությունները ֆինանսավորեն իրենց ռեսուրսների հաշվին և չեն կարող ֆինանսավորվել տարածքային համագործակցության ծրագրի կողմից:

7.3 Ընտրության, պայմանագրեր կնքելու և ծրագրերի իրականացման ընթացակարգերը

Տարածքային համագործակցության ծրագրերի պայմանագրերի կնքման և իրականացման ընթացակարգերը սահմանված են դիմում-հայտեր ներկայացնելու հայտարարության տարածման պահին գործող <<ԵՀ արտաքին գործողությունների շրջանակներում պայմանագրային ընթացակարգերի>> գործնական ուղեցույցում: Ծրագրի իրականացման ընթացքում սահմանի երկու կողմերում կիրառվելու են դիմում-հայտերի ընդունման և ծրագրերի ընտրության միասնական ընթացակարգեր:

Դիմում-հայտերի ներկայացման փաթեթը՝ ներառյալ դիմում հայտի ձևը և դիմորդների ուղեցույցը մշակվելու է ԻՄ-ի կողմից՝ ԱլԳ տարածքային համագործակցության աջակցության ծրագրի հետ համատեղ: ՏՀ ծրագիրն իրականացվելու է դիմում-հայտերի ներկայացման բաց հայտարարության միջոցով: Ծրագրի ողջ ընթացքում դիմում-հայտեր ներկայացնելու միայն մեկ հայտարարություն է տարածվելու: Դիմում-հայտեր ներկայացնելու հայտարարությունը տարածելու է ԻՄ-ը՝ դիմում-հայտի փաթեթը ՀՈՐՀ-ի և Եվրոպական հանձնաժողովի հետ համաձայնեցնելուց հետո:

ԱլԳ տարածքային համագործակցության աջակցության ծրագրի հետ համատեղ՝ ԻՄ-ը հնարավոր դիմորդներին պետք է տրամադրի դիմում-հայտերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն: Առաջատար դիմորդ կազմակերպությունները պետք է իրենց դիմում-հայտերը (ներառյալ էլեկտրոնային տարբերակը) ներկայացնեն Թբիլիսիում տեղակայված ԻՄ-ի գրասենյակ՝ առձեռն, սուրհանդակի կամ փոստային ծառայության միջոցով: Դիմում-հայտերի ներկայացման ընթացակարգերը կմանրամասնվեն դիմորդների ուղեցույցում:

Դիմումների գնահատումը և ծրագրերի ընտրությունը կիրականացվի երկու փուլով՝ 1) դիմորդների, ծախսերի և գործողությունների **համապատասխանության** գնահատում (ըստ համապատասխանության սահմանված չափորոշիչների), և 2) ծրագրի պահանջներին համապատասխանող դիմում-հայտերի **որակի** գնահատում (ըստ ընտրության և դրամաշնորհների տրամադրման սահմանված չափորոշիչների): ԻՄ-ը պետք է կազմակերպի գնահատման գործընթացը, իսկ ՀՈՐՀ-ը վերջնական որոշում կայացնի ծրագրերի գնահատման արդյունքների վերաբերյալ, որը պետք է հաստատվի Եվրոպական հանձնաժողովի կողմից:

ԻՄ-ը պետք է բացի սահմանված վերջնաժամկետի ավարտին ստացված դիմում-հայտերը, ստուգի վերջիններիս **համապատասխանությունը**: Համապատասխանության ստուգման ժամանակ ԻՄ-ը կարող է համագործակցել ազգային իշխանությունների և Հայաստանում ու Վրաստանում Եվրոպական միության պատվիրակությունների հետ՝ ստուգելու դիմորդների իրավական կարգավիճակը, ինչպես նաև ճշտելու, թե

արդյոք համընկնում են ներկայացված ծրագրերը ԵՄ-ի կամ հանրային ֆինանսավորմամբ իրականացվող այլ ծրագրերի հետ: Այս ստուգումներն ու ճշգրտումները պետք է համապատասխանեն անաչառության և գաղտնիության սկզբունքներին: Այս գործընթացում ներգրավված ազգային իշխանությունները պետք է պահպանեն իրենց անկախությունը: Դիմում-հայտերի բացման և համապատասխանության ստուգման արդյունքները պետք է հաստատվեն ՀՈՈՀ-ի կողմից: Դիմում-հայտերի **որակի** գնահատումն իրականացվելու է գնահատողների կողմից: Գնահատողներն ընտրվելու են բաց մրցույթի միջոցով (ԻՄ-ի կողմից մշակված և ՀՈՈՀ-ի կողմից հավանության արժանացած տեխնիկական առաջադրանք ի հիման վրա): ՀՈՈՀ-ը եւ ԻՄ-ը հաստատելու են գնահատողների ցանկը: Գնահատողները պետք է պատրաստեն գնահատման զեկույց՝ դրանում ներառելով գնահատման արդյունքում սահմանված պահանջներին համապատասխանող դիմում-հայտերի դասակարգման աղյուսակը: Գնահատողների առաջարկությունների հիման վրա ԻՄ-ի կողմից կազմված գնահատման զեկույցի նախնական տարբերակը ներկայացվելու է ՀՈՈՀ-ի, ինչպես նաև ԵՀ-ի վերջնական հաստատմանը: Գնահատման ընթացքում կիրառվելու է «չորս աչքի» սկզբունքը՝ յուրաքանչյուր դիմում-հայտ գնահատվելու է առնվազն երկու գնահատողի կողմից: Եթե երկու գնահատողների գնահատականները զգալիորեն տարբերվեն միմյանցից՝ ծրագիրը կգնահատվի նաև երրորդ գնահատողի կողմից:

ՀՈՈՀ-ը պետք է քննի գնահատողների եզրակացությունները և կարող է պահանջել հավելյալ պարզաբանումներ: Եթե ՀՈՈՀ-ը որոշի չառաջնորդվել գնահատողների եզրակացությունների որոշ մասով, ապա նա պետք է տրամադրի կուռ փաստարկներ և հիմնավորումներ, որոնք պետք է գրանցվեն գնահատման վերջնական զեկույցի մեջ: Դրամաշնորհների տրամադրման պայմանագրերը կնքելուց առաջ ԻՄ-ը կարող է խնդրել, որպեսզի ծրագրերի մեջ փոփոխություններ կատարվեն: Սակայն այս փոփոխությունները կարող են միայն մանր տեխնիկական հարցերի վերաբերել, և ոչ մի դեպքում չեն կարող փոփոխության ենթարկել ծրագրերի բովանդակությունը, նպատակները, հիմնական արդյունքները կամ գործողությունները, կամ ծրագրերի որևէ այլ հատված, որի հիման վրա դրամաշնորհ տրամադրելու վերաբերյալ որոշում է կայացվել: Ըստ <<ԵՀ արտաքին գործողությունների շրջանակներում պայմանագրային ընթացակարգերի>>՝ գործնական ուղեցույցում սահմանված ստանդարտ փաստաթղթերի՝ գնահատման վերջնական զեկույցը պետք է բաղկացած լինի յուրաքանչյուր համապատասխանող դիմում-հայտի գնահատման ամփոփագրից՝ ներառյալ գնահատման չափորոշիչները, գնահատականները, գնահատողների և ՀՈՈՀ-ի դիտարկումները, ինչպես նաև դիմում-հայտի պահանջներին չհամապատասխանող դիմորդների ցանկը՝ մերժման հիմնավորումներով: ՀՈՈՀ-ի կողմից ծրագրերի ընտրության արդյունքները պետք է հաստատվեն Եվրոպական հանձնաժողովի կողմից:

Եվրոպական հանձնաժողովի կողմից ՀՈՈՀ-ի որոշման հաստատումից հետո ԻՄ-ը պետք է պատրաստի և ընտրված ծրագրերի առաջատար դիմորդ կազմակերպությունների հետ ստորագրի դրամաշնորհների տրամադրման պայմանագրերը: Դրամաշնորհների տրամադրման պայմանագրերի ստորագրումից առաջ ծրագրերի բոլոր գործընկերները պետք է շարադրեն ծրագրի կառավարման և իրականացման իրենց ընթացակարգերը՝ առաջնորդվելով ԻՄ-ի և ՀՈՈՀ-ի կողմից հաստատված համագործակցության համաձայնագրի նմուշով:

Ծրագրերի արդյունավետ իրականացման համար ԻՄ-ը և ԱլԳ տարածքային ծրագրի աջակցության ծրագիրը պետք է տեղեկատվություն տրամադրեն և աջակցություն ցուցաբերեն դրամաշնորհառուներին: Ծրագրային բոլոր հաշվետվությունները (միջանկյալ և վերջնական ծրագրային հաշվետվությունները, ֆինանսական հաշվետվությունները և, անհրաժեշտության դեպքում, ծախսերը հավաստող հաշվետվությունները) և վճարման պահանջագրերը պետք է ներկայացվեն Թբիլիսիում տեղակայված ԻՄ-ի գրասենյակ: ԻՄ-ը կուսումնասիրի հաշվետվությունները և վճարման պահանջագրերը և համապատասխանաբար կիրականցնի վճարումները դրամաշնորհառուներին: Հաշվետվությունների և վճարման պահանջագրերի ներկայացման ընթացակարգերը մանրամասնված կլինեն ԻՄ-ի կողմից ԱլԳ

տարածքային համագործակցության աջակցության ծրագրի հետ համատեղ մշակված ծրագրերի իրականացման ուղեցույցում:

ԻՄ-ը դրամաշնորհառուների ներկայացրած հաշվետվությունների հիման վրա կմշակի ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ պարբերական (6 ամիսը մեկ) հաշվետվություններ: Հաշվետվությունները կներկայացվեն ՀՈՐՀ-ին:

ԻՄ-ն անհրաժեշտ քայլեր կձեռնարկի ապահովելու ԵՄ-ի ֆինանսավորման տեսանկյունից՝ ՏՀ ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունների համատեքստում: ՀՈՐՀ-ի անդամները ևս թիրախ շրջաններում և դրանց սահմաններից դուրս հնարավորինս ակտիվորեն տեղեկատվություն կտարածեն ծրագրի մասին:

Ծրագրի իրականացման փուլերը ներկայացնող աղյուսակը կցված է այս փաստաթղթին (տե՛ս Հավելված 4):

7.4 Թույլատրելի ծախսեր և տրամադրվող աջակցություն

Թույլատրելի ծախս են համարվում այն փաստացի ծախսերը, որոնք ամրագրված են դրամաշնորհի տրամադրման պայմանագրում, առաջացել և կատարվել են ծրագրի շահառուների կողմից ծրագրի իրականացման ընթացքում: Ծրագրի շահառուների և/կամ երրորդ կողմերի ներդրումները չեն համարվում թույլատրելի ծախս: Թույլատրելի ուղղակի և անուղղակի ծախս հասկացությունների սահմանումը պետք է համապատասխանի <<ԵՀ արտաքին գործողությունների շրջանակներում պայմանագրային ընթացակարգերի>> գործնական ուղեցույցի սահմանումներին, եթե այլ բան չի սահմանված դիմորդների ուղեցույցում:

Ֆինանսավորման համար ընտրված ծրագրերին տրամադրվող դրամաշնորհները պետք է կազմեն ընդհանուր թույլատրելի ծախսերի 90 տոկոսը և պետք է համաֆինանսավորվեն Եվրոպական միության բյուջեից կամ Եվրոպական զարգացման հիմնադրամից բացի այլ աղբյուրներից: Դրամաշնորհների նվազագույն բյուջեն կարող է կազմել 20 000 եվրո, իսկ առավելագույնը՝ 250, 000 եվրո: Դրամաշնորհի գումարները պետք է վճարվեն ծրագրերն իրականացնող առաջատար դիմորդ կազմակերպություններին մի քանի տրանշերով՝ հատուկ պայմաններում սահմանված դրույթներին համապատասխան:

Դիմորդների ուղեցույցում և դրամաշնորհների տրամադրման պայմանագրերում կարող են հավելյալ մանրամասներ մասնավորեցվել թույլատրելի ծախսերի և այլ ֆինանսական դրույթների վերաբերյալ:

8. Ֆինանսական հատկացումներ

Հայաստան-Վրաստան տարածքային համագործակցության ծրագրի ԵՄ ֆինանսավորումը կատարվում է Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի միջոցով՝ բյուջեի 2013թ.-ի տարածաշրջանային հատկացումներից:

Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության ծրագրերի ռազմավարությունում սահմանվել է այս ծրագրի ԵՄ ֆինանսավորման ծավալը՝ 1.35 միլիոն եվրո:

Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ շրջանների ռազմավարական վերլուծության արդյունքների և եզրակացությունների հիման վրա ծրագրի գործառնական նպատակների միջև ֆինանսավորումը կբաշխվի մոտավորապես այսպես՝

Գործառնական նպատակ I – Կենսապայմանների բարելավում	45 տոկոս
Գործառնական նպատակ II – Ընդհանուր մարտահրավերների լուծում	25 տոկոս

Ֆինանսավորման ինդիկատիվ պլան (հազար եվրո)՝

	ԵՄ ֆինանսավորում	Ազգային համաֆինանսավորում (մասնակից երկրների կողմից)	Այլ դոնորներ	Մասնավոր աղբյուրներից ֆինանսավորում (ծրագրերի գործընկերներ)	Ընդհանուր ֆինանսա- վորում
Գործառնական նպատակ I	607.5	0	0	67.5	675.0
Գործառնական նպատակ II	337.5	0	0	37.5	375.0
Գործառնական նպատակ III	405.0	0	0	45.0	450.0
Ընդամենը՝	1,350.0	0	0	150.0	1,500.0

Հավելված 1: Ծրագրի մեջ ներառման ենթակա շրջանների քարտեզը



Հավելված 2: Տարածաշրջանային վիճակագրական տվյալներ

	Հայաստան			Վրաստան	
	Լոռի	Շիրակ	Տավուշ	Քվեմո Քարթլի	Սամցխե-Ջավախեթի
Բնակչություն (հազար)	282.2	282.3	134.8	511.3	214.2
Բնակչություն (երկրի ողջ բնակչության %)	8.6	8.6	4.1	11.3	4.6
Գյուղաբնակներ (շրջանի ընդհանուր բնակչության %)	58.6	40.0	60.8	61.0	68.9
Ներդրում ազգային ՀՆԱ-ի մեջ (%)	չկան տվյալներ	չկան տվյալներ	չկան տվյալներ	8.5	3.1
Գյուղատնտեսությունը շրջանի ՀՆԱ-ի մեջ ²(%)	7.2	11.6	4.8	18.9	32.1
Արդյունաբերությունը շրջանի ՀՆԱ-ի մեջ ³(%)	6.1	3.4	0.8	41.4	2.8
Հյուրանոցային մահճակալների թիվը	256	176	1,353	410	5,723
Զբոսաշրջիկների թիվը	չկան տվյալներ	չկան տվյալներ	չկան տվյալներ	չկան տվյալներ	278.5
Պաշտոնական գործազրկություն (%)	18.4	19.3	11.9	9.4	չկան տվյալներ
Հատուկ պահպանվող տարածքների թիվը	չկան տվյալներ	չկան տվյալներ	չկան տվյալներ	2	11
Աղտոտման աղբյուրներից արտանետումները (տոննա)	39678	2985	17098	344.8	0.1
Թանգարանների տարեկան այցելությունների թիվը (հազար)	1.1	2.4	0.4	16.6	156.0

Աղբյուր: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն; Վրաստանի ազգային վիճակագրության գրասենյակ ԳԵՈՍՏՍՏ, Վրաստանի ազգային զբոսաշրջության գործակալություն; Վրաստանի շրջակա միջավայրի և բնապահպանության նախարարություն; սեփական հաշվարկներ:

² Հայաստանի մարզերի համար նշված տվյալները արտացոլում են ՀՀ ընդհանուր գյուղատնտեսական արտադրանքի մեջ տվյալ մարզերի ներդրման չափը:

³ Հայաստանի մարզերի համար նշված տվյալները արտացոլում են ՀՀ ընդհանուր արդյունաբերական արտադրանքի մեջ տվյալ մարզերի ներդրման չափը:


Հավելված 3: Ծրագրի մշտադիտարկման ցուցիչները

Գործառնական նպատակ	Գերակայություն	Առաջնային արդյունքի ցուցիչներ	Արդյունքի ցուցիչներ
<p>I. Սահմանամերձ շրջաններում տեղական համայնքների կենսապայմանների բարելավում՝ տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացման միջոցով</p>	<p>Թիրախ շրջաններում գյուղատնտեսության և դրան առնչվող տնտեսական ոլորտների տարածաշրջանային մրցունակության զարգացում</p>	<p>Թիրախ շրջաններում ձեռնարկություններին աջակցող/ ձեռնարկատիրության պայմանների բարելավմանը/ միջսահմանային բիզնես ցանցերի հաստատմանն ուղղված ծրագրերի թիվը</p> <p>Գյուղատնտեսության ոլորտին աջակցելու նպատակով միջսահմանային հետազոտական ցանցերի ստեղծմանն ուղղված ծրագրերի թիվը</p>	<p>Ծրագրի կողմից կազմակերպված միջոցառումներին մասնակցած/ ծրագրի իրականացումից օգուտ ստացած ՓՄՁ-ների/ձեռնարկատերերի թիվը</p> <p>Ստեղծված միջսահմանային գործընկերությունների/նախաձեռնությունների/ գործարար ցանցերի թիվը</p> <p>Տեղական և տարածաշրջանային կրթական հաստատությունների, հետազոտական կազմակերպությունների և կենտրոնների միջև նոր ստեղծված միջսահմանային գործընկերությունների թիվը</p> <p>Տեղական զարգացման հիմնահարցերի վերաբերյալ տպագրված համատեղ հետազոտությունների, ուսումնասիրությունների, ռազմավարությունների թիվը</p> <p>Գյուղատնտեսության բնագավառի հիմնահարցերի լուծմանն ուղղված համատեղ կազմակերպված միջսահմանային միջոցառումների/կոնֆերանսների/սեմինարների/դասընթացների թիվը</p>
	<p>Թիրախ շրջաններում զբոսաշրջության և հարակից ոլորտների զարգացման հնարավորությունների իրացում</p>	<p>Զբոսաշրջության ոլորտում իրականացված ծրագրերի թիվը</p>	<p>Մշակված և փորձարկված նոր համատեղ զբոսաշրջային ուղիների թիվը</p> <p>Ծրագրի արդյունքներից օգտվող զբոսաշրջիկների թիվը</p> <p>Միջսահմանային կրթական ծրագրերից օգտված շահառուների թիվը</p> <p>Ծառայությունների ոլորտում երիտասարդների համար ստեղծված նոր աշխատատեղերի թիվը</p> <p>Միջսահմանային զբոսաշրջության զարգացման վերաբերյալ իրականացված ծրագրերի շրջանակներում կազմակերպված միջսահմանային համատեղ միջոցառումների/ կոնֆերանսների/ սեմինարների/ դասընթացների թիվը</p>
<p>II. Սահմանամերձ շրջաններում առկա բնապահպանական,</p>	<p>Միջսահմանային բնապահպանական հիմնախնդիրների լուծում</p>	<p>Հատուկ պահպանվող տարածքների և/կամ բնական ռեսուրսների համատեղ</p>	<p>Հատուկ պահպանվող տարածքները և բնական ռեսուրսներն արդյունավետ կերպով կառավարող նորաստեղծ</p>

Գործառնական նպատակ	Գերակայություն	Առաջնային արդյունքի ցուցիչներ	Արդյունքի ցուցիչներ
<p>զբաղվածության, հանրային առողջապահության և ցանկացած այլ ընդհանուր մարտահրավերների հաղթահարում</p>		<p>կառավարում ստեղծող ծրագրերի թիվը</p> <p>Արտակարգ իրավիճակների միջսահմանային հիմնահարցերին ուղղված ծրագրերի թիվը</p> <p>Բնապահպանության ոլորտում գործընկերների միջև ուղիղ միջսահմանային համագործակցություն հաստատած ծրագրերի թիվը</p>	<p>միջսահմանային կառույցների և մեխանիզմների թիվը</p> <p>Տեղեկատվություն փոխանակելու և բնապահպանական միջոցառումներ համակարգելու նպատակով ստեղծված/աջակցություն ստացած ցանցերի թիվը</p> <p>Մշակված և/կամ իրականացված համատեղ կառավարման ծրագրերի/ռազմավարությունների թիվը</p> <p>Բնական ռեսուրսների կայուն օգտագործումը խրախուսող տեղեկատվական/ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների թիրախ անձանց թիվը</p> <p>Սահմանի երկու կողմում գործող փրկարար ծառայությունների միջև ստեղծված գործընկերությունների թիվը</p> <p>Միջսահմանային ինստիտուցիոնալիզացված և կայուն միջսահմանային գործընկերությունների, ցանցերի, ասոցիացիաների և այլ կառույցների թիվը</p> <p>Բնապահպանության վերաբերյալ ծրագրերի կողմից կազմակերպված միջսահմանային համատեղ միջոցառումների/ կոնֆերանսների/ սեմինարների/ դասընթացների թիվը</p>
<p>III. Մշակույթ, կրթություն, սպորտ</p>	<p>Միջսահմանային բազմամշակութային երկխոսության հաստատում և երիտասարդների փոխանակում</p>	<p>Սահմանի երկու կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ մշակութային և սպորտային միջոցառումներ պարունակող ծրագրերի թիվը</p>	<p>Մշակութային և սպորտային տարատեսակ միջոցառումներին, մրցույթներին, փառատոներին, կոնֆերանսներին մասնակցած անձանց թիվը</p> <p>Սահմանի մյուս կողմում ապրող հարևանների ավանդույթների, կենսապայմանների և հիմնահարցերի վերաբերյալ իրենց գիտելիքները կատարելագործած անձանց թիվը</p> <p>Կազմակերպված մշակութային միջոցառումների թիվը</p> <p>Մշակութային միջոցառումներին մասնակցած անձանց թիվը</p> <p>Մշակութային բազմազանությունը խրախուսող ստեղծված տեղեկատվական և քարոզչական նյութերի թիվը</p>
	<p>Տեղական ինքնակառավարման բարելավում</p>	<p>Միջսահմանային հաղորդակցությունը և համագործակցությունը խթանող ծրագրերի թիվը</p> <p>Տեղական ինքնակառավարման</p>	<p>Միջսահմանային միջոցառումների մեջ ներգրավված կազմակերպությունների և մարդկանց թիվը</p> <p>Սկսած և իրականացրած ծրագրերի թիվը</p> <p>Տեղական իշխանությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությամբ</p>

Գործառնական նպատակ	Գերակայություն	Առաջնային արդյունքի ցուցիչներ	Արդյունքի ցուցիչներ
		բարելավմանն ուղղված ծրագրերի թիվը	կազմակերպված համատեղ միջսահմանային միջոցառումների/կոնֆերանսների/սեմինարների/դասընթացների թիվը

Հավելված 4: Ծրագրի կառավարում



Հավելված 5: Շահագրգիռ կողմերի խորհրդակցությունների արդյունքները

Աշխատանքային խմբի հայ և վրացի ներկայացուցիչների կողմից համատեղ գործառնական ծրագրի նախնական հաստատումից հետո 2014 թվականի մայիսի 20-ին այն տեղադրվել է ԱԳՏՀ աջակցության ծրագրի վեբ կայքում (www.eaptc.eu)՝ հանրային իրազեկման և առաջարկությունների հավաքագրման նպատակով: Ավելին՝ ԱԳՏՀ աջակցության ծրագիրը համակարգել է շահագրգիռ կողմերի խորհրդակցությունների գործընթացը՝ ներառման ենթակա շրջանների պետական և հասարակական սեկտորի ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպված մի շարք հանիպումներ կազմակերպելով:

Երկիր	Քաղաք	Ամսաթիվ	Մասնակիցների թիվը	Ներկայացրել են		Ըստ սեռի	
				Պետական կառույցներ	Հասարակական կառույցներ	Կին	Տղամարդ
Վրաստան	Ռուսթավի	մայ. 27, 2014	11	4	7	4	7
	Մառնեուլի	մայ. 27, 2014	11	3	8	5	6
	Ախալցխե	մայ. 28, 2014	20	2	18	14	6
	Ախալքալաք	մայ. 28, 2014	21	11	10	6	15
Հայաստան	Գյումրի	մայ. 29, 2014	21	9	12	11	10
	Վանաձոր	մայ. 30, 2014	22	9	13	10	12
	Իջևան	մայ. 30, 2014	13	2	11	4	9
Ընդամենը		7 հանդիպում	119	40	79	54	65

Շահագրգիռ կողմերի խորհրդակցական հանդիպումների ժամանակ մասնակիցները հնարավորություն են ունեցել ներկայացնելու իրենց դիտողություններն ու առաջարկությունները Համատեղ գործառնական ծրագրի նախագծի վերաբերյալ: Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված են բարձրաձայնված հարցերը, առաջարկություններն ու դիտողությունները, ինչպես նաև դրանց տրված պատասխանները:

Քաղաք	Հարցեր/առաջարկություններ	Պատասխան
Ռուսթավի	Արդյո՞ք հնարավոր կլինի իրականացնել Էկո-տուրիզմի ծրագրեր: Կոնկրետ ինչը կարող է ֆինանսավորվել դրա շրջանակներում:	<<Թիրախ շրջաններում զբոսաշրջության և հարակից բնագավառների զարգացման հնարավորությունների իրացում>> գերակայություն: Այն կարող է ներառել այնպիսի գործողություններ ինչպիսիք են համատեղ միջսահմանային զբոսաշրջային ուղիների մշակում, առաջարկվող ծառայությունների որակի բարելավման նպատակով տեղերում տուրիստական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար համատեղ վերապատրաստումների կազմակերպում և այլն: Այս գերակայության շրջանակներում ծրագրի մեջ ներառման ենթակա շրջաններում կարող են նաև իրականացվել Էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ:
	Մենք ԶԼՄ-ների ներկայացուցիչներ ենք, և մեր պատկերացրած ծրագիրը գերակայություններից որևէ մեկի շրջանակներում չի տեղավորվում: Ինչպե՞ս կարող ենք	Ծրագիրը կարող է միտված լինել տեղեկատվական և կրթական քարոզարշավների կազմակերպմանը, ներկայացված գերակա ոլորտների գյուղատնտեսության, զբոսաշրջության, միջսահմանային բնապահպանական հիմնախնդիրների, բազմաձևակությանի երկխոսության, երիտասարդության հարցերի և տեղական ինքնակառավարման մարմինների

	<p>մենք էլ մասնակցել ծրագրերի մրցույթին:</p>	<p>կարողությունների հզորացման վերաբերյալ քաղաքացիների իրազեկության մակարդակի բարձրացմանը: Ավելին՝ ծրագրի շահառուներ կարող են լինել հասարակական, շահույթ չհետապնդող կազմակերպությունները և ծրագրերը պետք են անպատճառ միջսահմանային լինեն:</p>
	<p>Արդեն հստակեցված է արդյո՞ք, թե ինչպես են բաշխվելու ֆինանսական միջոցները երեք գերակայությունների միջև:</p>	<p>Ֆինանսական միջոցների բաշխվածությունը երեք գերակայությունների միջև ինդիկատիվ է: Բաշխման հիմնական նպատակը երեք գերակայությունների միջև հավասարակշռության պահպանումն է:</p>
Մասնույժ	<p>Ծրագրի իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցները պետք է ընդգրկեն բոլոր գործընկերների, թե՛ միայն առաջատար դիմորդի կողմից իրականացվելիք միջոցառումները:</p>	<p>Ծրագրի բյուջեն պետք է ներառի բոլոր գործընկերների կողմից իրականացվելիք միջոցառումները:</p>
	<p>Ո՞ր շրջանները կարող են մասնակցել:</p>	<p>Ծրագրի մեջ ներառման ենթակա շրջանները նշված են Համատեղ գործառնական ծրագրում: Դրանք են՝ Հայաստանի Հանրապետությունում Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերը, իսկ Վրաստանում՝ Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթիի շրջանները:</p>
	<p>Կարող ենք արդյո՞ք շարունակել արդեն իրականացվող կամ ավարտված մեր ծրագրերը:</p>	<p>Այդ դեպքում դիմում հայտ ներկայացնելու ձևաթղթի մեջ պետք է նշեք, թե ինչպես է առաջացել ծրագրի իրականացման գաղափարը:</p>
Ախալցխե	<p>Արդյո՞ք օժանդակություն կտարամադրվի հողի ոռոգման նախաձեռնություններին:</p>	<p><<Թիրախ շրջաններում գյուղատնտեսության զարգացում և դրան առնչվող տնտեսական ոլորտների տարածաշրջանային մրցունակության բարձրացում>> գերակայության նպատակն է նպաստել այդ շրջաններում գյուղատնտեսության զարգացմանը և բարձրացնել ոլորտի արդյունավետությունը՝ նման զարգացմանը խոչընդոտող միջսահմանային գործոնների հաղթահարմանն ուղղված լուծումների ֆինանսավորման միջոցով: Հողի ոռոգման հիմնահարցերը ևս կարող են ներկայացվող ծրագրերի մաս կազմել, եթե դրանք վերաբերվեն թիրախ շրջանների գյուղատնտեսական զարգացման վրա ներազդող միջսահմանային գործոններին:</p>
	<p>Ինչու՞ գերակայությունների մեջ ներառված չեն հանրային առողջապահության և դրա բարեփոխման վերաբերյալ հարցեր:</p>	<p>Շրջանային և միջսահմանային մակարդակում հանրային առողջապահությանը վերաբերվող հիմնահարցերը <<Միջսահմանային բնապահպանական հիմնախնդիրների լուծում>> գերակայության մասն են կազմում, եթե դրանք կապված են բնապահպանական հիմնախնդիրների հետ: Միաժամանակ դրանց կարելի է անդրադառնալ նաև <<Տեղական ինքնակառավարման բարելավում>> գերակայության շրջանակներում՝ բերափոխումների ոլորտում լավագույն փորձի փոխանակման միջոցով: Սակայն, հանրային առողջապահության բարեփոխումը հիմնականում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորության շրջաններից դուրս են և հանրապետական իշխանությունների լիազորությունների մասն են կազմում:</p>
Ախալքալաք	<p>Ինչպե՞ս կարող են իրականացվել սպորտային միջոցառումներ:</p>	<p>Սպորտային միջոցառումները կարող են իրականացվել <<միջսահմանային բազմամշակութային երկխոսության հաստատում և երիտասարդների փոխանակում>> գերակայության շրջանակներում:</p>
Գյումրի	<p>Հնարավոր է արդյո՞ք գյուղատնտեսության ոլորտի մեջ ներառել նաև սննդի վերամշակման միջոցառումներ:</p>	<p><<Թիրախ շրջաններում գյուղատնտեսության զարգացում և դրան առնչվող տնտեսական ոլորտների տարածաշրջանային մրցունակության բարձրացում>> գերակայության շրջանակներում կարող են իրականացվել նաև սննդի վերամշակման ոլորտում միջսահմանային</p>

	համագործակցություն ենթադրող միջոցառումներ:
Ինչու՞ կրթությունն առանձին գերակայություն չէ:	Կրթությունն, ընդհանուր հիմնահարց է, որին, ըստ էության, կարելի է անդրադառնալ Համատեղ գործառնական ծրագրում նշված բոլոր հինգ գերակայությունների շրջանակներում: Իսկ <<Կրթություն, մշակույթ և սպորտ>> գործառնական նպատակ 3-ում հատկապես կարևորվում է կրթությունը և հիմնականում շեշտադրվում է կրթության ոլորտին ուղղված միջոցառումները:
Ինչու՞ ներառված չեն պատմական ժառանգության և հիշողության պահպանության հիմնահարցերը:	Այս հիմնահարցերին կարելի է անդրադառնալ <<թիրախ շրջաններում զբոսաշրջության և հարակից բնագավառների զարգացման հնարավորությունների իրացում>> և <<Միջսահմանային բազմամշակութային երկխոսության հաստատում և երիտասարդների փոխանակում>> գերակայությունների շրջանակներում:
Ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ ՀՈՈՀ-ի անդամները ընտրելու են լավագույն ծրագրերը: Ի՞նչ քայլեր եք ձեռնարկելու պայքարելու ՀՈՈՀ-ում կոռուպցիայի դեմ:	Ծրագրերի ընտրությունը բաղկացած է լինելու մի քանի քայլերից, որոնց մեջ ՀՈՈՀ-ից բացի այլ կառույցներ էլ են ներառված լինելու: Նախևառաջ ծրագրերի դիմում-հայտերը քննելու են անկախ փորձագետները: Այս գործընթացը համակարգելու է իրականացնող մարմինը: ՀՈՈՀ-ի կողմից որոշում ընդունելուց հետո գործընթացը պետք է քննության առնվի Եվրոպական հանձնաժողովի կողմից: Բոլոր անկախ փորձագետների, ԻՄ-ի և ՀՈՈՀ-ի անդամների գնահատականները պետք է հիմնավորված լինեն: ՀՈՈՀ-ի անդամ են հանդիսանալու երկու պետությունների ներկայացուցիչները, որոնք նշանակվելու են տարբեր հաստատությունների և կազմակերպությունների (կենտրոնական և մարզային իշխանությունների և քաղաքացիական հասարակության) կողմից: ՀՈՈՀ-ի որոշումներն ընդունվելու են փոխհամաձայնության հիմքով: Ավելին՝ ծրագրերի ընտրության վերաբերյալ ՀՈՈՀ-ի որոշումները հանրային են լինելու ընտրված ծրագրերի և դրանց հատկացված ֆինանսական միջոցների ցանկը հասանելի է լինելու հանրության բոլոր անդամների համար:
Վանաձոր	Ինչու՞ գերակայությունների մեջ ներառված չեն հանրային առողջապահության և դրա բարեփոխման վերաբերյալ հարցեր:
	Պատասխանը նշված է վերևում:
	Ինչու՞ ծրագրի մեջ ներառված չեն սոցիալական ապահովության ը վերաբերվող հիմնահարցերը:
	Սոցիալական բարեկեցությունն ընդհանուր հիմնահարց է, որին կարելի է անդրադառնալ բոլոր գերակայությունների շրջանակներում:
Իջևան	Առաջարկություններ չեն ներկայացվել